

Տ. ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ծնվել է 1961 թ. Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում: Ավագանի անունը եղել է Վարդան:

Փոքր տարիքից ծնողների հետ տեղափոխվել է Երևան և 1969 թ. ընդունվել տեղի № 116 դպրոցը, որտեղ և ստացել է իր նախնական կրթությունը: Այնուհետև տեղափոխվել է նույն քաղաքի № 152 դպրոցը, որի տասնամյա դասընթացն ավարտել է 1978 թ., բարձր առաջադիմությամբ: Նույն թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է սարկավագ Ս. Էջմիածնի Մայր տաճարում:

1982 թ. փայլուն հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը և հաջորդ տարվա մարտ ամսին, հոգևոր ճեմարանի հարկի տակ, պաշտպանել «Քրիստոնեության հետքեր Սյունիքում նախագրիգորյան շրջանում (Ա—Գ դդ.)» թեմայով իր ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

Դեռևս ուսանողական տարիներին նա անձանձրույթ կերպով մասնակցել է հոգևոր ճեմարանում կազմակերպվող հանդիսություններին ու գրական-գեղարվեստական երեկոներին, պարբերաբար իր աշխատակցությունը բերել նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

Ճեմարանն ավարտելուց հետո նշանակվել է աշխատանքի Վեհարանում՝ որպես քարտուղար, միաժամանակ Երևանի պետական համալսարանում մասնակցել հայագիտական որոշ առարկաների դասընթացներին՝ որպես ազատ ունկնդիր:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Մայր տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի:

Տ. Շնորհք աբեղան այժմ աշխատանքի է նշանակվել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում՝ որպես պատասխանատու քարտուղար: